ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 128

ք. Երևան 20.07.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմինե Բաղդասարյան» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 10.05.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-10/6-2 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Ա/Ձ Արմեն Մազմանյանը (ՀՎՀՀ 57279443) 2022թ. նոյեմբերի 18-ից մինչև 2024թ. նոյեմբերի 18-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ Ա/Ձ Արմեն Մազմանյանի և Կազմակերպության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն Արմեն Մազմանյանը և Արմինե Բաղդասարյանը փաստացի բնակվում են միևնույն հասցեում և վարում են ընդհանուր տնտեսություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 29.03.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/6-2 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հուլիսի 10-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ